

կախումն ենթադրելով, վասն զի գիտենք ստուգիւ որ Հին կտակարանի հեղինակներէն շատեր հեղիայ գիտարեանք չէր որ իրենց գրեցրը գրեցին, ինչպէս յայտնի է Դատուարաց, Մնացորդաց ևն. գրեցրէն: Յատուարացն պատմական գործերու յօրինումին համար կը ստիպուէին մեզ պէս ընենը վաւերագիրներ, քաղել ականատես և ականջալուր անձերու տեղեկութիւնները:

Մեր ինդրին աւելի յօտ խօսելով՝ գիտենք որ Առկներու խմբագիրը կը ներմուծէ Ագուր՝ և Լամուէլ՝ իմաստէլացիներու խօսքերը և հուսկ «Ժրագլուխ» կնոջ դրուատորը՝ այս երեք մասերն ալ բոլորովին անջատ են գործին ամբողջութենէն, պարզապէս յաւելուած մը կը ձևացընեն Առակաց գրեին: Ամէնուն ծանօթ է Մակարայեցուց Բ. Գըրգին հեղինակին յայտնի վկայութիւնը՝ թէ ինչպէս Յասոն կիրենացիին գործէն է որ կ'օգտուի և կը համառօտէ:

Ջարմանալի չէ որ ուրեմն Առակաց գրեցին մէկ մասը Սողոմոնի չըլլայ, այլ իրմէ վերջ զայն խմբագրողէն աւելցուած. գործը միշտ իր մեծ մասով Սողոմոնի կը մնայ, որով և «Առակց Սողոմոնի» տիպոգրը միշտ իր ստուգութեան մէջ է:

Եթէ նման յաւելուածներ Մովսէսի գրեցրուն մէջ եղած են (աստուածաբնաւ անձերն, ներշնչմամբ) ինչպէս յայտնի է⁵, ինչ զարմանք Առակաց մէջ որ ինքնին կամ ըստ բնոյթին հաւաքածոյ մ'է առածներու, իմաստուն խօսքերու:

1. Ըստ բնագրին և ըստ զխակարգութեան Երթարի—Ատրի—Վուլի. արքղէ Լ. զուլից Ագուր անուն մէկու մը կ'ընծայուի: [ի գիտցուի թէ արգիօք անձ մ'է թէ խորհրդական (Symbolique) տիպար մը]. զուլին այսպէս կը սկսի. «Բանք Ագուրի որդւոյ Յաթէն». ուսկից վերջ ընդհանուր անորոշութիւն մը կը արէ վասն զի Ատրին և Վուլիական ալ Եթանանից պէս բուր յատուկ անուններն ալ կը Թարգմանեն, Եթանասանի և մեր քով յատուկ անուն և ոչ մէկ հետք կայ. պարզապէս այսպէս կը սկսի. «Ջայս սաէ այր ցհաւասացիւս Աստուծոյ» (Լ. 1.):

2. Ըստ Երթարի—Ատրի—Վուլի. Գլ. ԼԱ. 1-9 կ'ընծայուի Լամուէլի, ինչպէս կը սկսի. «Բանք Լամուէլի արքայի». հոս ալ Եթանասանց յատուկ անունը Թարգմանած են, որով որոշ լի հասկցուի:

3. Յաւելուածի այս երրորդ մասը (Գլ. ԼԱ. 10-81)

Յաջորդով կը յուսանք ներկայացնել Ամեն—եմ—ոփէի իմաստութիւնը՝ զոր Թարգմանած ենք լատին թարգմանութենէն, հրատարակուած «Biblica» թերթին մէջ Alexis Mallon հեղինակէն որուն յօդուածէն օգտուած և քաղած ենք մեր ծանօթութիւնները⁶:

Հ. ԵՂԻԱ ՓԵՅԻԿԵԱՆ



ԱՐՏԱՔԻՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՔ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ



Ա.

Ա. ՐԱՐԱՏ

Յայտնի է որ բուն Երթարեան կտակարանին մէջ, վաղագոյն մասն գրուած իբր մի հազար չորս հարիւր ամօք նախ քան գրիկստոս, ընդհանրապէս Արարատ բառն է գործածուած անդրադարձութեամբ մեր Հին Հայաստանին, որ նոյնն է որպէս ժամանակակից Ասորեստանիայց արձաւնազրութեանց մէջ Որարատոյ յիշուածն: Կտակարանին մեր Հայերէն թարգմանութեան մէջ՝ սոքին անդրադարձութիւնը վերածուած են երբեմն որպէս «Արարատ» և երբեմն որպէս «Հայք», զոր օրինակ. «Եւ մինչդեռ երկիր պապանէր (Սենեքերիմ, Ն. Ք. 705-681), ի տան իւրում, Աւրաքայ կոռց իւրոց, Աղբամալէն և Սա

22 Նախագասութենէ կը բաղկանայ երբայական զերու թուին համեմատ. և հետեւորդական այն է որ Նախագասութեանց առաջին բառերը այբուբենի կարգով կը յառաջեն նման մեր «Սենեք» շարականներուն:

4. «Ջայն ամենայն որ ինչ միանգամ ի ձեռն Յասոնայ կիրենացւոյ ի ինչ զուլի զգուր զգուր ցուցալ է, զայս ամենայն շանացոց ի մի զուլի հրովարտակի կարճ ի կարճ ցուցանել... Եւ մեզ՝ որ զաշխատութիւնս յանձն առաք վասն համառօտ բանի՝ մի դիւրին ինչ շան համարիլիք, կամ սակաւ քրտանց և տղնութեանց արժանիք»: Բ. Մակ. Բ. 24, 27 են:

5. Բ. Օրինաց ԼԻ. վերջին զուլից, ուր Մովսէսի մահը և Յետի անոր տեղ յաջորդիւ կը պատմուի:

6. Biblica, Vol. 8 Jan-Febr-Mart. 1927, fasc. 1 էջ 8-80. Roma են:

րասար որդիք նորա սպանին զնա սրով,
և ինքեանք գնացին փախստական ի Հայո»
(Եւ. 11. 38). մինչդեռ նոյն զէպրին մա-
սին յիշուածն է (տե՛ս Դ. Թադ. ԺԲ. 37),
«և ինքեանք զերծան յերկիրն Արարատայ»:

Բ.

ՈՒՐԱՐԱՐՈՒ ԵՒ ՆԱԽԱՐԱՐՈՒ

Ասորեստանեայ Արքայից մէջ, վաւե-
րականօրէն՝ մինչ ցարդ հնագոյնն է հա-
մարուած Սաղմանասար Առաքնոյն (Ն. Բ.
1325-1300) մէկ խորագրութիւնն թէ նա
«վստահացաւ մուտ գործել խանիգօլրատ
երկիրն, որ իւր նախորդներն փորձած ան-
գամ չէին» (տե՛ս, Prof. Maspero, *The
Struggless of Nations*, էջ 608): Գի-
տելի է որ խանիգօլրատ փոքր Հայոց երեք
զլխաւոր գաւառների մէկն էր, միւսներն
լինելով Կառնախ և Միլլիդդու, ինչպէս
յայտնուած են Ասորեստանեայ արձանա-
գրութեանց մէջ:

Յետոյ տեսնում ենք Տուրպուտ-Նիկիր
Ա. որ հռչակում է թէ (Իբր Ն. Բ. 1275ին)
յաղթանակօր նուաճեց ոչ պակաս քան
քառասուն Նայիրիի (Սուրին Հայաստանի)
թագաւորներ:

Թագդարփադասար Ա. (Ն. Բ. 1120-1100),
ինքնաձայնելով զինքն որպէս «բոց կի-
զիչ» և «փոթորիկ պատերազմաց», իւր
չափազանցօրէն ինքնապանծ փորագրու-
թեանց մէջ յայտարարում է թէ նա «Ու-
սումի ծառերով» կամուրջ ձգելով Եփրա-
տէս գետոյն վերայ, ասպատակեց տասն-
եւեց լեռներ (որոց անուանքն յիշատա-
կում է), նուաճեց քսաններեք Նայիրիի
թագաւորներ (որոց անուանքն նոյնպէս յի-
շատակում է մի առ մի), և թափանցեց
անցաւ մինչև վերին ծոցն (վանայ ծոցն):
Երկրորդ անգամ նուաճեց Նայիրիի վար-
սուն թագաւորներ:

Ասորեստանեայ ամենահռչակաւոր Ար-
քայից մէկն էր Ասուր-Նասիրպալ (Ն. Բ.
885-860), որոյ Կուրխի (Kurkh) միա-
պաղաղ ժայռակոթողին վերայ փորագրու-
թիւնքն հռչակում են որ նա կործանեց

Նայիրիի երկուհարիւրյոյստն ամրակուռ
պատնէշապատ քաղաքներն, Լուդոնի Ռի-
տանական. Թանգարանն հարուստ է սորա
թագաւորութեան բազմակողմանի անցու-
ղարձից պատկերաքանդակ որմնաքարե-
րով: Սոցանէ երկուսն երեւում են Հին
Հայաստանի առնչութեամբ, և դրա են,
(ա). Թիւ 16^{a-1}. Ասուր-Նասիրպալ, հե-
ծեալ իւր ռազմական կնաքին մէջ սրա-
շաւ ընթանալով անցնում է կոնաձև լե-
րանց գագաթներն, որոց սրածայր պատկե-
րացումն յար և նման է թագղաթփաղասար
Առաջնոյն նկարագրութեանցն՝ յընթացս
նորա ասպատակութեանցն ի Նայիրի —
«լիբանց բարձրաբերձ ծայրերն սուր էին
որպէս զգաշոյն», ուր բնակչէքն «փախ-
չում էին նման թռչնոց», բայց Արքայն
կառարշաւ սլանալով և կտրելով լեռանց
ծայրերն անցաւ ի յաղթութիւն: (ք). Թիւ
16^{b-2}. Նոյն տեղական սրածայր լեռանց
պատկերացումն որպէս ի վերլիշեալն, ընդ
մէջ որոց յառաջ են ընթանում Ասուր-Նա-
սիրպալի զինեալ հետեակ զօրականներն:

Իրիտանական Թանգարարանի գանձերի
մէջ՝ մեզ համար քան զամենեսին հետա-
քրքրական են Սաղմանասար Երկրորդի (Ն.
Բ. 860-825) պալատի դրանց անագա-
պրինձ ջրհապտոյտ պահպան տախտակ-
ներն, որոց մանրապատկեր վերաքանդակ-
ներին չորսն ներկայացնում են Սաղմա-
նասարի արշաւանքներն և յաղթանակներն
«Հիւսիսային» սահմաններում, այսինքն
է՝ մեր Հին Հայաստան աշխարհում, ի ժա-
մանակի վանայ արքայից առաջնոյն, Ա-
րամէի (Ն. Բ. 860-843), ըստ բեռագիր
փորագրութեանցն, և դրա են, (ա). Ու-
րարտուի (Արարատայ) թագաւորի Արնե
քաղաքի պաշարումն: Յարձակումն քաղա-
քին վերայ աղեղնաւորօք և մարտական
կառօք (Առաջ կողմն), զօրաց բանակա-
տեղին, ուր զօրծաւորք պատրաստում են
զօրաց պատկանելի պաշար կայլն: (ք).
Ուրարտուի թագաւորի, Արամէի (աստ յի-
շատակուած որպէս որդի Գուսիի — «Son
of Gusi») ուրիշ մէկ քաղաքի պաշարումն
և զբաւումն: Բանակատեղին ուր աշխա-

տաւորք զբաղուած են առանին պատրաստութիւններով: (Առ միւս կողմ), զերելոց և կողոպուտների ցուցահանդէս, ուր ոմանց զերելոց անճառելի չարչարանքներն եւս պատկերացած են: (գ). Մաղմանասար Երկրորդի արշաւանքն առ Նայրիի երկիրն: Թագաւորն զոհ է մատուցանում Ասորեստանեայց աստուածներին առ երի լճերի միոյն: Թառալ ընթացումն Ասորեստանեայց զօրաբանակին՝ լերանց վերայ: (դ). Ասորեստանեայց պաշարումն և զբաւումն Ուրարտուի Սուգուների քաղաքին: Կալանաւորաց հանդիսաւոր յառաջ շարժումն:

Բրիտանական Թանգարանին մէջ կան, նաև, Անսոր-Բանիպաի (Ն. Բ. 670—626) քանի մի մեծադիր պատկերաքանդակ որմնաքարերն, որոց մէկն (Թիւ 50) ներկայացնում է սոյն Թագաւորն, բազմեալ իւր զենազաններն (իբր 650ին), որոց Վանայ Թագաւոր, Ռուսաս Երրորդ (Ն. Բ. 670—645), ի նշան բարեկամութեան, յղած էր Ասորեստան ընորհաւորելոյ Արքային յաղթութիւններն Եղամացոց վերայ: Պատկերին մէջ զփուարին չէ որոշել Հայ Դիւպաններն, իւրեանց «գափախ» զլիարկներովն որք իջնում են մինչև ականջներն, և երկայն մարմնափարիչ պատմուճաններովն որք հասնում են մինչև զբերթէ գարշապարներն (Թերևս իւրեանց բարձրաստիճան ազնուութեան յատկական տարազ, վասն զի գիտենք, ուրիշ քանդակներից, որ Ուրարտուի արական հասարակ սեռի պատմուճաններն, նման Փոփզացոց և Հատտեանց տարազներին, հասանում էին ոչ խոնարհ քան իւրեանց ծուռզերն): Հայ զենազաններն, յոտնկայս և ձեռնամած (ի նշան պատկառանաց առ Թագաւորն), զարհուրանօք ականատես են լինում ահռելի չարչարանքներին զորս Եղամացի զերեալներն կրում են զահիճների սուրերին ներքոյ:

ԱՐՄԷՆ ԵՒ ԱՐՄԷՆԻՍ

Արտաքին հին և նոր ազգերն մեր Հայաստան աշխարհն անուանած են Արմէնիա, Այս առնչութեամբ, մինչ ցարդ ընդհանրապէս հնագոյնն համարուած է Պարսից Արքայ՝ Վշտասպան Դարեհի (Ն. Բ. 521—485) Հայաստանի յիշատակութիւնն որպէս Արմինա, Բէհուստունի բարձրաբերձ ժայռաքանդակ փորագրութեանց մէջ: Սակայն՝ անվիճելի է որ, կարելի չէ նորաստեղծ բան մի լինէր այն, այլ նշանակում է որ Արմինա անուանումն ի զործածութեան էր հին Պարսիկներին մէջ, վաղագոյն քան Մեծին Դարեհի ժամանակներն, ուստի այդ յիշատակարանին մէջ արձանագրութիւնն՝ Պարսիկներէն արդէն ծանօթ և սովորական կոչումն մի համարելի է:

Որոնեցի Հայր Յովսէփ Մանտալճեանի բազմաշխատ քառալեզուեան (սեպագիր, Լատիներէն, Գաղղիներէն և Հայերէն) Թարգմանութիւնքն (տպագրեալ 1900ին) ի մասին Վանայ Արքայից սեպագիր փորագրութեանցն, նա մանաւանդ Մինուաս Առաջնոյն (Ն. Բ. 800—780) բազմաթիւ յիշատակարաններն, բայց չյաջողեցայ գտանել ոեւէ յիշողութիւն Արմինիա բառին կամ Արմէն ազգանուանն: Յուսում աչքէն չի վրիպեցաւ եթէ, արդեօք, Վանայ Թագաւորներն յիշատակած լինեն զայն: Բրիտանական Թանգարանին մէջ կան սեպագիր փորագրութեամբ կոնք մի և քարոտախտակ մի (Թիւ 90863), Վանայ Թագաւորների յիշատակարաններով: Քարեօտախտակին վերայ բացատրութիւնն յայտարարում է, «Inscription of Minua, King of Van (յայտնապէս Մինուաս Առաջին)». Dedication to the god Haldi», որոյ արձակ Թարգմանութիւն, տառականապէս չէ երևում հրատարակութեանց մէջ՝ զորս ես խուզարկեցի, ուստի և չմարթացայ իմանալ թէ զորա մէջ Արմէն կամ Արմինիա յիշատակուած է թէ ոչ: Սակայն և այնպէս, պարտաճանաչութեամբ հանդերձ առ բանիրուն և արժանահաւատ պատմաբան,

Հայր Սահակ Տէր Մովսէսեան, ի դէպ եմ համարում ի մէջ բերել սասանոր՝ հետևեալ քաղուածն նորա հռչակաւոր Պատմադրին Հայոց երկասիրութենէն, թէ Գերմանացի հայագէտ հմուտ հեղինակն, Լեման Հաուպտ, «ապացուցուց որ Քրիստոսէ ութ դար առաջ՝ Հայերն արդէն Արմէններ կը կոչուէին, վասն զի Ուրարտացոց թագաւորն Մինուաս՝ Մալաթիոյ կողմերն գտնուած իրեն արձանագրութեան մէջ՝ գտնուցն Բրմեի կ'անուանէ, իբր իր ցեղէն տարբեր ժողովուրդ մը» (Հատ. Ա. էջ 124)։

Արդ, սորին առնչութեամբ, դառնամք վերստին առ Հին Կտակարանն, և մասնաւորապէս՝ Ամովս Մարգարէին նախասացութիւնն Սամարացոց մասին։ Ամովս, Մարգարէից մէջ վաղագոյնն, ապրեցաւ ութերորդ դարում նախ քան զՔրիստոս, և ժամանակակից էր Վանայ Արքայից Մինուաս Առաջնոյն (800-780) և Արգիստէս Առաջնոյն (780-755)։ Սամարացիք կարի վատահամբաւ անունն էին ստացած ընթացիկ ազգերին մէջ, իւրեանց չարագործութիւններով և յոռի զեղխ կենցաղովարութեամբ, և յատկապէս՝ յզփացեալ հարուստների անգութ և ճնշող վերաբերութեամբն առ աղքատս և անանկս, ուստի և Ամովս ուղղելով իւր խօսքերին առ Սամարացի կանանց սեռն, որպէս զդիշք և նախապատճառք երկուստեք սեռից առնառկութեանցն, կծու անուանարկութեամբ՝ կոչում է նոցա էրիկը Բասանո («Լուարուց զբան Տեառն երինջը Բասանո»։ Դ. 1.), և մարգարէանում է (իբր 787 Ռեւակներին) թէ ժամանակ պիտի գայ երբ նոցա փղոսկրեայ կահաւորեալ ապարանքներն պիտի խորտակուին, քաղաքն կործանուի և երկիրն աւերակ դառնայ, և մեղսապարար բնակիչներն տարազրուին ի յերինն Ռեմանայ («Եւ անկանիցիք ի յերինն Ռեմանայ»։ Դ. 3.), որ նոյնն է որպէս «Հարմոնայ» կոչումն՝ գրուած բուն էբրայերէնին մէջ և եւ որ, ստուգաբանօրէն, նշանակում է առ կամ ի յերինն Մանայի կամ Մինեի։ Թէ ուր էր այդ տարագրու-

թեան երկիրն, ինքնին Ամովս վերստին վաւերացնում է իւր հետազայւ բացատրութեամբ, և հաւանօրէն՝ անկարկութեամբ առ Սորին Հայաստան. «Եւ փոխեցից զձեզ անդր քան զԴամասկոս, առէ Տէր» (Ամովս, Ե, 27)։

Վեցիւղուեան մէկ կտակարանի մէջ (*Biblia Hexaglotta*, էջ 600-601) բուն էբրայերէն արձանագրեալն, «Հարմոնայ», թարգմանուած է «Բոման» (Յունարէնում), «Արմոն» (Լատիններէնում), և «Հարմոն» (Գերմաններէնում), իսկ տարօրինակ իմն մեկնաբանութեամբ՝ Անգղիերէնին մէջ տեսնում ենք «Palace» և Գաղղիերէնին մէջ «Chateaux forts»։ Ինչպէս ընդունելի է որ տարագրելով ըստուար թուով զերեվարեալ բազմութիւն մի՝ տեղադրեն նոցա, որպէս պատիժ, մէկ պալատի մէջ, ինձ թուում է թէ դորա բացատրութիւնն այսպէս է, այսինքն, երբ Սուրբ Հերոնիմոս (Յ. Տ. 340-420) Սուրբ Կտակարանն թարգմանեց Լատիներէնի, նա գործածեց «Armon» որպէս համազօր ընդ էբրայերէն բնագրին Հարմոնայ բառին, թէ, արդեօք, Սուրբ Հերոնիմոս (որ միանձնացեալ՝ բազում տարիներ ապրեց Պաղեստինում, և քաջահմուտ էր էբրայերէն լեզուին), «Armon» գրելով իւր թարգմանութեան մէջ հասկացաւ զայն ինչպէս *Armenia*, զբականապէս յայտնի չէ մեզ, բայց, զիարդեկեցէ, նորա Լատիններէնի (զոր օրինակ) Անգղիերէն նախաթարգմանիչքն ձեռնարկեցին ստուգաբանել զայն, և զտան որ էբրայերէն լեզուին մէջ՝ «Արմոն» նշանակում է պալատ և այդպէս, ոչ թէ լուրջ և հարազատ թարգմանութեամբ, այլ ըստ յարաբերութեան հանգամանացն՝ իմաստագրուել, և զոգցես թէ, անհնթեթ իմն յարասութեամբ, Ամովսէն գործածած բառն, որպէս տարագրութեան երկիրն («Armon») ըստ Լատիններէնին, վերածեցին որպէս *Palace*! Նոյնպէս և Գաղղիերէնին մէջ որդեգրեցին *Chateaux forts* որպէս համազօր ընդ պալատ բառին, վասն զի «Գիեակներէն», նա մանաւանդ հնազանդ ժամանակներում,

արքայական և իշխանական ապարանքներ էին:

Գիտենք որ իբր Դազար չորս (և ըստ ումանց կտակարանական ժամանակաբանից՝ հինգ) հարիւր ամբոյ նախ քան զԳրիստոս, այսինքն է սկսեալ այն ժամանակներից երբ Հնգամատեանքն գրուեցան, իբրայեցիք մեր վերին Հայաստանին կոչում էին Արարտո, ինչպէս տեսանելի է յամենայն տեղիս իւրեանց կտակարանի մէջ՝ ուր գոն անդրադարձութիւնք առ այն, որ նոյնն էր որպէս Ասորեստանեայց Ուրարտուն: Բայց նոքա (մերայեցիք) ի՞նչ անուամբ էին ճանաչում մեր Ստորին Հայաստանն, այսինքն է՝ այն մասն որոյ մէկ բաժինն Հնաբանք որորանն համարած են մեր նախահարց, կամ Արմենների, հեռաւորագոյն ժամանակներու, այսինքն է՝ տարիներով յառաջ քան Հնդ-Իւրոպական ներխուժումն (իբր Ն. Ք. 625ին) ի Հայաստան, ըստ մեր վերլուծեալ քաղաածորէն ներածեալ՝ Մինուաս Առաջնոյն փորագրութեանն: Ասորեստանից Ստորին Հայաստանի (Նայիրի կոչուած ի նոցանէ) այն մասն որ անկանում էր ի մէջ վանայ և Ուրմիոյ լճերին, ըստ իւրեանց բնեւագիր փորագրութեանց՝ կոչում էին «Մաննայի», որ անուան քաջ ծանօթ էին Եւրպացիք որպէս Մոնայ և Միննի: Սորա առ ապագոյց՝ յիշելի է որ Եմբիա (Ն. Ք. 629-580), իբր յամին 595, նախաձայնելով Բաբելոնի անկումն, ըստ Երբայերէն բնագրին այսպէս է մարգարէանում, ինչպէս տեսանելի է օտար թարգմանութեանց մէջ որոյ Անգղիերէնն, զոր օրինակ, է, «Call together against her the kingdoms of Ararat, Minni, and Aschanez» (Jer. LI. 27): Կարի նշանաւոր է տեսնել որ երբ, հիւզերորդ դարու ստաւին կիսում, մեր Սրբազան Թարգմանիչք, սուրբ Մեսրոպ և սուրբ Սահակ և իւրեանց աշակերտք, Սուրբ Կտակարանն թարգմանեցին մեր գեղեցիկ Հայերէնի, այս մասն այսպէս վերածեցին. «Պատուէր տուց յինչն Արարատեան թագաւորութեանցն և Ասքանազեան գնդին» (Եր. ԵՄ. 27). քանզի Միննի Հայաստան աշխարհի մասն

կազմելով, յականէ անուանէ չիշատակեցին զայն Հայերէնին մէջ, համարովան դակիչ «Արարատեան թագաւորութեանց» վերածութիւնն բաւական համարելով՝ ըստ ժամանակի ընդունելութեանն, լինելով և ինքնամիփոխ ըստ իմաստին: Եւ, հրաշալի է տեսնել որ երբ Մարգարէին նախասացութիւնն կատարեցաւ, և Աքեմէնեան Արքայն, Կիւրոս, գրաւեց Բաբելոն (Ն. Ք. 538ին), նա ունէր որպէս իւր զինակից և զօրագլուխ, մեր Արարատեան աշխարհի Հայոց թագաւոր՝ Երուանդ Առաջնոյն թագածառանգ որդին, Տիգրան Առաջին, և կարեւոր հայկական զօրախումբ մի յաղթական պատերազմին մէջ, միայն թէ այդ ժամանակ՝ մեր դրացի և ցեղակիցք, Փոռագայիք, անկեալ լինելով ի պետական զօրութեանէ, Ասքանազեան զունդ՝ ոչ ևս էր ի վիճակի աջակցելոյ, ի լրիւ կատարումն Երեմիայի մարգարէութեանն:

Մեք չենք երկուանում որ երբ Երեմիա բուն Երբայերէնին մէջ գործածեց «Սիննի» անունն՝ Հայաստանի մէկ բաժնին համար, ինքն չստեղծագործեց զայն, այլ այն հետեանք էր որպէս ժամանակէ ի վեր ծանօթ բառ մի իւր ազգին մէջ և հասարակօրէն ի գործածութեան, որոյ նախատիպն մեք տեսնում ենք Ամովսի մարգարէութեան մէջ որպէս «Եմբոնայ» (Եր. Եմ. 27):

Ի ճահ ենք համարում յիշել այստեղ՝ որ Ամովսի գուշակութիւնն Սամարիա քաղաքի մասին կատարեցաւ, երբ Սաղմա նասար Չորրորդ, յամին 724, արշաւելով ի Պաղեստին՝ յարձակեցաւ այդ քաղաքին վերայ և պաշարեց զայն երեք տարի տեղութեամբ, ինչպէս որ երկիցս յիշուած է Դ. Թագ. Գրքին մէջ (Ժէ. 3, և ԺԲ. 9), միայն թէ ինքն Սաղմա նասար չէր որ տիրեց քաղաքին (որպէս գրուած է կըտակարանին մէջ), այլ նա մեռանելով յընթացս պատերազմին, նորա յաջորդ, Սաղգոն Երկրորդն էր (Ն. Ք. 722-705) որ շարունակելով եռամիսայ պաշարումն՝ ի վերջոյ տիրեց քաղաքին, յամին 721, և վերապլորդացն աքսորեց ի հեռաւոր տե-

դիս տեղիս, որոց մէկն էր «աս յնրամբն Մարաց» (Գ. Թագ. ԺԲ. 11), որով և վերջացաւ Թագաւորութիւնն Խորայնիւի:

Օրինակներ չեն պակասում որ բազմիցս մէկ լեառն և լեռան շրջապատող երկիրն, որպէս և ժողովուրդն, համանունութեամբ որդեգրուած են օտարաց կողմանէ, և խօսելով որպէս մերձաւորագոյն մեր նիւթին, յիշենք զոր օրինակ՝ Արարատ լեառն, Արարատ երկիրն և Արարատեան ժողովուրդըն, և ի նմին կարգի՝ Միննի լեառն (կրդ. Հարմօն—ուղղական հոլովն), երկիրն և ժողովուրդն (Արմէն), Ապաքէն՝ յուսամբ թէ յաւակնելի ենթադրութիւն չհամարուի մեր կողմանէ, եթէ յարեմբ որ, առ նուազն, նախ քան զՖրիստոս իններորդ դարում, Եբրայեցիք մեր աշխարհի մէկ մասն որ մօտաւորագոյնն էր՝ ուստի և առաւելապէս ծանօթ ինքեանց, ճանաչում էին որպէս Արմէնիա, քոքը ինչ տարբերական հրնչմամբ, ըստ յարմարութեան իւրեանց լեռին յատուկ ուղղագրութեան և բառակազմութեան, և թէ Ամովսի անդրադարձութիւնն, «Հարմօնայ», իբր Ն. Ք. 787-ին, նշանակում է Արմէնիա՝ Առ ապացոյց մեր համոզմանց, յառաջ բերենք աստանօր, *Hebrew and English Lexicon of the old Testament* քննարանական գրքէն (էջ 248). հետեւեալ վկայութիւնն Եբրայերէն Հարմօն բառի մասին:— «Կասկածանք կան այս բառի մասին. Թերևս զեղծումն լինի քնազրին մէջ (Ամով, Գ. 3): Արամէական Հին կտակարանի (*Targum*) և Ասորական կտակարանի (*Peshito*) Թարգմանութիւնքն ունին *Mountain(s) of Armenia*: Սիմաքոս (Սամարյայի, որ Քրիստոսական երկրորդ դարու վերջերումն վերստին Թարգմանեց կտակարանն ի Յոյն լեզու) ունի *Armenia*»:

Դ.

ԵՐԱՍԻ ԵՒ ԿՈՒՐ

Գիտենք, ի տրամութիւն մեզ, որ մեր ժամանակներում իսկ ո՛չ թէ յաղթողք ի պատերազմի, այլ բռնաւորք, որպիսի՝ առ-

գթութեամբ և խռտանգանօք տարագրեցին մեր ժողովուրդն հարիւրաւոր մղոնօք առ հարաւային Միջագետք արեւակէզ սահմաններն, որպէս զի նոքա ոչնչւանային անսովոր կլիմային ազդեցութեան ներքոյ: Նոյնպէս և հին ժամանակներում Ասորեստանեայց Թագաւորներն, երբ արշաւում էին Պաղեստինի և Ասորւոց քաղաքներին վերայ, նա մանաւանդ երբ պատերազմներն պատժողական էին և զորեալ ի վրիժառութենէ, եթէ օգտակար չէին վարկանդում գրաւեալ քաղաքների գերեվարեալ բնակիչներին տեղաւորել իւրեանց պետական գաւառների մէջ, տարագրելով վարում էին նոքա առ հիւսիսային երկրներն, և մասնաւորապէս մեր Հայաստան աշխարհի գանալան մասերն, որպէս զի նոքա անհետանային անսովոր ցուրտ կլիմային ներքոյ: Ի յաւելումն մեր նախնեթացօրէն յիշեալ կտակարանական վկայութեանն, յառաջ բերենք, ահա, երկու ուրիշ օրինակներ որպէս բաւական ապացոյց առ այն: (ա). Ամովս, մարգարէանալով Դամասկոս քաղաքի մասին, ասում է. «Եւ գերեցիք ընտիր ժողովուրդն ասորւոց, ասէ Տէր» (Ա. 5), որ կատարեցաւ, իբր յիսուն ամօք զկնի նորա մարգարէութեանն, ձեռամբ Թագաւորի պաշտօնար երկրորդի (Ն. Ք. 745-727). «Եւ եւ արքայն ասորեստանեայց ի Դամասկոս և էառ զնա, և վարեաց զնա ի գերութիւն ի Կիւրէն» (Գ. Թագ. ԺԶ. 9): Աւրջ՝ այս տարագրութեան տեղին, «Կիւրէն», բուն Եբրայերէնին մէջ յիշուած է որպէս Կիր, և մեք հաւատում ենք որ այս նշանակում է մեր Կուր գետն, որ հնագոյն աշխարհագրական քարտէզների մէջ տեսանելի է *Cyrus* (Կիրոս) անուամբ, և զոր մեր Թարգմանիչք վերածեցին, Հայերէնին մէջ, որպէս «Կիւրէն»: (բ). Հոչակաւոր Անգլիացին, Լէյարդ, հին Նինուէի պեղումների կանխագոյն արդիւնաւոր ձեռնարկողն, արձանագրած է որ տախտակների մէկն՝ Բաւիանի ժայռաքանդակ փորագրութեանց մէջ (իբր քառասուն մղոնօք առ հիւսիս—արեւելեան կողմն Նինուէի), յիշատակելով Սենեքերիւ Արքայի յաղ-

Թուրքներն, բովանդակում է նա և՛ թէ նորա թագաւորութեան երկրորդ տարին (այսինքն է՝ յամին 704), նա գրաւեց Բաբելոն, և բնակչներին առաքեց Արախտի (Arakhti), զոր հնագէտք համարում են նոյնն որպէս մեր Երասխ գետն (Araxes):

Ս. ՏԵՐ Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ս Ր Ա Ն Ա Ն Գ

ԲԱՌԻՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

ՍՐԱՆՈՒԳ. — Հայկազեան հատ. Բ, էջ 757 Ա սրւնի մէջ, բառիս նշանակութիւնը կը գրէ, «Շեղչակոյտ սպանեցոց», և հոմա. նիշ կը համարի զայս «Ջրահանք» բառին. իսկ Առձեռն բառգ. էջ 739 նոյն կարծէ զայն «Սրահանկ» և «Սրիկայ» բառից հետ: Վկայութիւն մը միայն ունի Մատթէոս Ուռհայեցիէն. — Տրուած մեկնութիւնները ուղիղ չեն թուիր. և «Ջրահանք» են բառից հետ ամենեկին հոմանիշ չէ: — Բառիս ստու. գարանութիւնը արդէն կազմութենէն իսկ յայտնի է. սրահանգ, այսինքն՝ սուսերա. հագ, վրան տոբ հագնող կամ հանգնող (մարդ): Սրահանգ, կը նշանակէ սպառա. զէն, թիկնապահ, կտրիճ զինուոր, կամ կտրիճ մարդ: Բառը միայն համապատաս. խան է միջնադարեան յունարենի σπαθάριος բառին. և այս՝ երկու իմաստով ալ, թէ բառին նիւթական նշանակութեամբ, և թէ միանգամայն պաշտօնական զօրծածու. թեամբ. — Միւրթար Գոշ իր Դատաստա. նազըրի զլ. Միւրթ, պարտաւան (արքունիքի) զանազան աստիճանները թուելով՝ բնագիր ձեռագրի 531 էջին մէջ կը գրէ. «և ի նոցա. նէ լինին սպատխարք». անհասկանալի բառ մը: Համառոտութեան համար ձեռագրաց տարբերութիւնները զանց կ'ընեմ. Միայն մեր 1253 ձեռագիրը (Է, գ), բառը հաւա.

տարմարար օրինակելէն վերջ, անոր տիւ տառերուն վրայ նշան մը կը դնէ և նոյն տողի զիմաց՝ լուսանցքի մէջ՝ (էջ 515) նշա. նին զէմ Ի զիրը կը դնէ. ասով ընթերցողին կ'իմացնէ թէ այն բառը թոյով պէտք է գրել, և սպաթարք հմմ. spatia, σπάθη, իտլ. spada կամ spata (σπαθάριος) կար. դալ և ոչ սպաճարք: Սակայն, այսու հան. դերձ, հայ կարդացող մը՝ չէր կրնար հաս. կնալ թէ ինչ ըսել է սպարարք կամ սպատա. խարք: Անոր համար Դատաստանագրքի ուրիշ օրինակ մը, մեր ձեռագրաց է, գ. 214, զոր ժԳ դարէն արդի կարելի չէ կար. ձել, իր 414 էջի լուսանցքին մէջ, սպատա. խարք՝ անհասկանալի բառին հանդէպ՝ կը դնէ սրահանգ հայերէն բառն: Ուրեմն, սրա. հանգ ըսել է սպատխարք, և սա՝ է սպա. բար(ք), այսինքն՝ յունական σπαθάριος, և որովհետեւ վերջինս թիկնապահ, սպառա. զէն, կտրիճ մարդ, կամ կտրիճ զինուոր կը նշանակէ, հետեւարար նոյն նշանակութիւնն ունի նաև սրահանգ բառը, քանի որ Սպա. բարի իբրև հայերէն թարգմանութիւն զրուած է՝:

Ուստի, Հայկազեանի և Առձեռնի ղոյն բառին տուած մեկնութիւնը՝ քայքարձակա. պէս անյարմար է թէ Միւրթար Գոշի բա. ցատրութեան, թէ Ուռհայեցոյն նախա. դատութեան: Միւ. Գոշ. կ'ըսէ. (ձ. էջ 531). «Յործած ի ճանապարհի լինի արքայն՝ զսուրբ խաչն ի նոցանէ կրէ, և ի նոցանէ լինին սպատխարք, չորս արք որք զգէնան կրեն», վերև ցուցինք որ սպատխարք կամ լաւ ևս սպարարք բառին հայերէնը՝ սրա. հանգն է. արդ ինչ իմաստ կը մնար Գոշի նախադասութեան մէջ թէ որ սրահանգ ար. դարև «շեղչակոյտ սպանեցոց» նշանակէր. «Թագաւորը ճամբորդութեան առնէ՝ Ս. խաչն իրենցով կ'առնէ, և ասոնցմէ կ'ըլլան (սպարարք = սրահանգ), այսինքն մեռել. ներու կոյտ մը՝ որ չորս հոգի կ'ըլլան».

1. Թէ այս բառը թիկնապահ, սպատաճն են կը նշա. նակէ, ահա թէ ինչ կ'ըսէ Forcellini, Lexicon totius latinitatis հտ. Ե, էջ 580, Բ սրւն, Թ. 4, զոր բառ առ բառ լատիներէնէ ի հայ կը թարգմանեն. «Spatharius կամ Spatarius կը թուի զինուոր մը սրով վա.

ռեալ, որ՝ իրը պաշտօնեայ՝ կայսեր կամ զօրավարաց (Dúces) հետ կազ ետէն կ'երթար, Թէ՛ անոնց (մար. մեր) անձը պաշտպանելու, Թէ՛ միանգամայն անոնց հրամանները կատարելու. որով ի պաշտօնէ, Թագաւորաց պազաւան մէջ իշխանութիւն մ'ունէր».